ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/34 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 09 սեպտեմբերի 2024թ.

2024թ. սեպտեմբերի 03-09-ը ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/34 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Ն. Սուքիասյան՝ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ,
Ն. Բաղդասարյան՝ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի հաշվապահ,
Վ. Սանթուրյան՝ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի տնտեսագետ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ն. Սուքիասյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Մ. Սիմոնյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից և Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. **ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/34** ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի, ներկայացված հայտերի բացման, գնահատման, առաջարկված գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ որոշելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/34 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ԵՒ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

Հանձնաժողովի նախագահ Ն. Սուքիասյանը նիստը հայտարարեց բացված և հայտնեց տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների վերաբերյալ տեղեկատվությունը:

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին (ՀՀ դրամ) | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Անվադող 7.50R20 համասեզոնային HIGER KLQ 6770 G Ավտոբուսների համար | 36166500 AMD | 2024-09-03 11:00:00 | 43,560,000.00 |

**ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/34** ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

**ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/34** ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակից/ներ/ը/

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե | Էլ. փոստ |
|---|---|---|---|
| 1 | «Արպանիվ» ՍՊԸ | ՀՀ ք. Երևան, Նար-Դոս 122 | automaxtender@mail.ru |

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված.

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են **ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/34** ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.
2. Ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին.
3. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել.
4. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

Հակադարձ աճուրդի ավարտին, Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Հ/հ | Չափաբաժնի համար | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | Ընտրված մասնակից «X» |
| 1 | 1 | Արպանիվ ՍՊԸ Ապրանքի ամբողջական նկարագիր | 43560000 AMD | 36166500 AMD | 20 % | 43399800 AMD | 36166500 AMD | 20 % | 43399800.00 AMD | X |

Հանձնաժողովը որոշեց.

1.Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:

2.Նիստը կասեցնել և **«Արպանիվ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված Ընթացակարգին մասնակցության հայտի ապահովումը կանխիկ փողի ձևով ներկայացնելու վերաբերյալ հայտով ներկայացված՝ Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին փոխացելու վերաբերյալ վճարման հանձնարարագրի անդորրագրի իսկությունը ստուգելու նպատակով հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 67-րդ կետը, հարցում կատարել ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Հանձնաժողովն արձանագրեց.

1. ՀՀ ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարի կողմից ստացված **№ 12/12-1/18951-2024** գրությամբ վերջինս հայտնել է, որ **ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/34** ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում **«Արպանիվ» ՍՊԸ**-ի կողմից փոխանցված **2,178,000.00** ՀՀ դրամը 28.08.2024թ. մուտքագրվել է հայտի ապահովման թիվ 900008000466 հաշվին:

Հանձնաժողովը որոշեց.

1.Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերը գնահատել բավարար:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 4. ԸՆՏՐՎԱԾ և ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով ընտրված /և հաջորդաբար տեղեր զբաղեցրած/ մասնակիցներ հայտարարել Աղյուսակում համապատասխան տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 5. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց, գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում, համակարգի կողմից տրամադրված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագծերը:

Որոշվեց՝

1. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարությունների տեքստերը:
2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ չկիրառել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*
Ն. Սուքիասյան ______________

*Հանձնաժողովի անդամներ՝*
Ն. Բաղդասարյան ______________
Վ. Սանթուրյան ______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*
Մ. Սիմոնյան ______________